Զահրատ

Սիրածներուդ բերնին մէջ

Պօղոս աղբար տանձին քիլօն քնի՞ է
Երեք ոսկի քեզի համար էֆենտիս
Երկու քիլօ տանձ որ առնեմ հինգ ոսկի տամ չի՞ բաւեր
Դուն օտա՞ր ես բնաւ մի՛ տար Էֆենտի
Թէ որ փրկէ չե՞մ տար քեզի քեզի չտամ ո՞րու տամ
Պօղոս Աղբար սա դդումները թա՞րմ են
Դուն ի՞նչ կ'ըսես ծաղիկները վրան են դեռ չե՞ս տեսներ
Այս առաւօտ ինքս եմ գացեր զատեր եմ
Այս առաւօտ ծաղիկներս հագայ ես ալ դուրս ելայ
Եկուր տես որ գիշեր չեղած ծաղիկներս թոռմեցան
Քանի քիլօ դդում կշռեմ Էֆենտիս
Պօղոս Աղբար Պօղոս Աղբար ըսէ՛ դուն ալ ուզա՞ծ ես
Ամէն օր չէ բայց երբեմն նոր ծաղիկներդ հագնիլ
Քարափն ի վեր քարափն ի վար սանկ քէյֆովդ պտտկիլ
Ու տուն դարձիդ ըսէ՛ դուն ալ ինծի նման տեսա՞ծ ես
Որ ծաղիկներդ ամէնքը մէկ լալկան լալկան թոռմեր են
Չհասկցայ բա՞ն մը ըսիր Էֆենտի
Երկու քիլօ տանձ ալ կշռէ ըսի նայէ խակ չըլլայ
Հոգ մի՛ ըներ տանձ չէ կարա՛գ բերնիդ մէջը կը հալի
Պօղոս Աղբար սա տանձերուն տեղ օր մըն ալ փորձե՞ր ես
Կախուիլ կենալ եւ արեւուն տակ երազել ճիւղն ի վար
Ու հասուննալ հողէն աւիշ օդէն բուրմունք ըմպելով
Երկու քիլօ դդում երեք երկու քիլօ տանձ վեց

Օր մ’ալ հալիլ սիրածներուդ բերնին մէջ
Ինը ոսկի ամէնքը
Բարով ուտես նորէն եկուր Էֆենտիս